Մաթեմատիկայի մասնախմբի

2022-2023 ուստարվա

տարեկան հաշվետվություն

Մասնախմբի նախագահ՝ Ն. Ղուշչյան

2022-2023 ուստարում մասնախումբն աշխատել է հետևյալ կազմով, հետևյալ դասարաններում՝

1. Ավագյան Լիանա – 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ դասարաներ
2. Գուլքանյան Նազիկ – 7-րդ, 10-րդ, 11-րդ դասարաներ
3. Ղուշչյան Նաիրա – 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ դասարաներ
4. Բարխուդարյան Անահիտ – 2-րդ, 3-րդ, 5-11-րդ դասարաներ

Մասնախմբի բոլոր անդամներն աշխատել են առարկայական չափորոշիչներին համապատասխան, առաջնորդվել են թեմատիկ պլաններով, որոնք քննարկվել են մասնախմբի առաջին նիստում և հաստատվել տնօրենի կողմից։

Հաստատվել է նաև մասնախմբի նախագահի տարեկան աշխատանքային պլանը, որում ներառված են ուստարվա ընթացքում մասնախմբի գործունեության շրջանակներում նախատեսվող աշխատանքները։

Ելնելով ծրագրերի կատարողականությունից, դասարանների առանձնահատկություններից և պարապող ուսուցիչների առաջարկություններից՝ դպրոցական բաղադրիչ դասաժամեր են հատկացվել 3-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տնօրինության կողմից ստուգվել է առարկայի դրվածքը դպրոցում. անց են կացվել ԿԶՆԱԿ-ի կողմից առաջադրված գրավոր աշխատանքներ 10-րդ դասարանում։

Անց է կացվել «Կենգուրու» ամենամյա մրցույթը, որին մասնակցել են տարբեր դասարանների աշակերտներ։ Արդյունքում ունեցել ենք նաև մրցանակակիրներ՝ Հովսեփյան Ավետ (7-րդ դասարան), Թանդիլյան Ժան (10-րդ դասարան), Հովսեփյան Հովհաննես (8-րդ դասարան), Զուրաբյան Աբել, Աթաբեկյան Տիգրան (7-րդ դասարան)։

Պարբերաբար ստուգվել է ծրագրերի կատարողականությունը, գրավոր աշխատանքների քանակի և տեսակի ապահովումը։ Կատարել ենք դասալսումներ՝ փորձի փոխանակման, մեթոդական նորամուծությունների նպատակով, շտկել թերությունները։

Մաթեմատիկայի օլիմպիադայի դպրոցական փուլին 21. 11. 23-ին մասնակցել են 6-10 դասարանների 38 աշակերտներ։ Երկրորդ՝ տարածաշրջանային փուլ անցել է 10-րդ դասարանի աշակերտ Ժան Թանդիլյանը։

ԵՊՀ-ի կազմակերպած մաթեմատիկայի օլիմպիադայում II փուլ է անցել 12-րդ դասարանի աշակերտուհի Լիլյա Աբովյանը։

VIII^{ա} և VIII^{բ} դասարանների աշակերտների միջև կազմակերպվել և անցկացվել է մրցույթ (ուսուցչուհիներ՝ Լ. Ավագյան և Ն. Ղուշչյան)։

V դասարանում անցկացվել է բաց դաս «Անվտանգ համացանց» թեմայով (ուսուցչուհի՝ Ա. Բարխուդարյան)։

Անց է կացվել բաց դաս X դասարանում «Ֆունկցիաների գրաֆիկների ձևափոխությունները» թեմայով (ուսուցչուհի՝ Ն. Գուլքանյան)։

Կատարվել են նաև հետևյալ նախագծային աշխատանքները.

1. «Մի քանի տեքստային խնդիրների լուծում տարբեր եղանակներով» (ուսուցչուհի՝ Ն. Ղուշչյան), 8-րդ դասարան

2. «Առողջարանային գոտու ստեղծումը» (ուսուցչուհի՝ Լ. Ավագյան), 8-րդ դասարան

3. «Աղբի տեսակավորում» (ուսուցչուհի՝ Ն. Գուլքանյան), 10-րդ դասարան։

Digitally signed by NASIBYAN ASTGHIK 6910670051
Date: 2023.07.04 10:45:32 AMT